ՈՒՍՈՒՑՉԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2021

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ԹԵՍՏ 2

ՔՆՆԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Դուք պետք է լուծեք առաջադրանքները և լրացնեք ձևաթուղթը: Թեստ-գրքույկը չի ստուգվում: Էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը: Ուշադիր կարդացե՛ք ձևաթղթի լրացման կանոնները:

1-14-ը ընտրովի պատասխանով առաջադրանքներ են. ճիշտ պատասխանին համապատասխանող վանդակում հարկավոր է դնել X նշանը: Այդ առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր: Միևնույն առաջադրանքի համարի տակ մեկից ավելի նշում կատարելու դեպքում տվյալ առաջադրանքը գնահատվում է 0:

15-27 առաջադրանքներից և ենթաառաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր. պահանջին կարող են համապատասխանել մեկից ավելի թվեր: Ձևաթղթում դրանց համարներին համապատասխանող վանդակներում հարկավոր է դնել X նշանը: Այդ առաջադրանքների համար 1 միավոր կարող եք ստանալ այն դեպքում, եթե ճիշտ են արված բոլոր նշումները:

28-37 առաջադրանքներում պահանջվում է նշել 3 ճիշտ պատասխանները: Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1-ական միավորով, այսպես, եթե Ձեր 3 նշումներից 3-ն էլ ճիշտ են, վաստակում եք 3 միավոր, 2 ճիշտ նշման դեպքում՝ 2 միավոր, 1 ճիշտ նշման դեպքում՝ 1 միավոր: Նշումները պետք է կատարել միևնույն եղանակով՝ համարներին համապատասխանող վանդակներում դնելով X նշանը, սակայն տվյալ առաջադրանքի տողում չի կարելի կատարել 3-ից ավելի նշում: Միևնույն տողում ցանկացած 4 և ավելի նշում ունենալու դեպքում առաջադրանքը գնահատվում է 0, եթե անգամ ճիշտ են որևէ 3 նշումներ:

38-39 առաջադրանքների յուրաքանչյուր ենթաառաջադրանքի համար պահանջվում է գրել համապատասխան թիվը:

Ցանկանում ենք հաջողություն

1 **Ո՞ր շարքի բոլոր բառերում գրության սխալ կա:** *(1 միավոր)*

1) քամելեոն, կծկտուր, իշիազ
2) դիցուկ, ապուխտ, խրթվիլակ
3) քսուկ, ծեծկռտուք, երկորյակ
4) երկպառակտություն, անկոտրուն, քողտիք

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում միասին:** *(1 միավոր)*

1) բարձր(դասարանցի), տարուց(տարի), նոր(նախիջևանյան), դռնե(դուռ)
2) հարավ(աֆրիկյան), խոսքի(մասային), հինգ(հարկանի), առ(այն)
3) քաջ(առողջություն), հարյուր(քսանչորսերորդ), ի(տրիտուր), ձեռք(սեղմում)
4) բառ(գիրք), երկու(տոկոսանոց), հնդ(եվրոպական), հետ(այսու)

3 **Ո՞ր շարքի բոլոր բառերում հնչյունափոխություն կա:** *(1 միավոր)*

1) սնունդ, գործնական, պատրանք
2) ըմպանակ, ուխտադրուժ, ժուժկալ
3) հոգաբարձու, ճանճրույթ, թանճրամիտ
4) ակնբախ, կենարար, պատմական

4 **Ո՞ր պնդումն է սխալ:** *(1 միավոր)*

1) Բարդ կամ ածանցավոր բառերում հանդես եկող *յ* կիսաձայնը միշտ ձայնակապ է:
2) Կան բառեր, որոնք բառային շեշտ չեն կրում:
3) Օտար լեզվի կանոններով շեշտվող փոխառյալ բառերը հոլովվելիս շեշտը կրում են վերջին վանկի վրա:
4) Հայերենում ուղղագրությունը գերազանցապես հնչյունային է. բառերը հիմնականում ինչպես գրվում, այնպես էլ արտասանվում են:

5 **Ո՞ր շարքում դարձվածքի բացատրության սխալ կա:** *(1 միավոր)*

1) ***կատվի դրախտ***–անիմաստ կյանք, ***սպիտակ ագռավ*** –չտեսնված բան, շրջապատից տարբերվող մարդ
2) ***հարյուրից մի անգամ*** –հազվադեպ, ***սիզիփոսյան աշխատանք*** –ապարդյուն գործ
3) ***ծանր հրետանի***–գլխավոր ուժը, ***տրոյական ձի*** - գաղտնի, քողարկված միջոց
4) ***Մորփեոսի գիրկն ընկնել*** –քնած լինել, ***սայլի հինգերորդ անիվ*** – լրացուցիչ օգնական ուժ

6 **Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից:** *(1 միավոր)*

1) կաթոգին–բիրտ, խռնվել–ցրվել, հանդուգն–անհողդողդ, թեթև–տանջալի
2) կորովի–անզոր, ճապաղ–ամփոփ, սրտոտ–վեհերոտ, պայծառ–մռայլ
3) ջրարբի–պապակ, ողորկ–անոսր, միակերպ–զանազան, մանկամիտ–ներհուն
4) հստակ–տարտամ, վայելուչ–անագորույն, պիրկ–թույլ, նանիր–իմաստալից

7 **Ո՞ր շարքում բառի սխալ բացատրություն *չկա:*** *(1 միավոր)*

1) ***անկարգել*** –օդի մեջ բացվող թռչող հարմարանք, ***ընդոծին*** –լքված երեխա, ***պայազատ***–ազնվական տոհմի ժառանգ
2) ***արբշիռ*** –կերուխումի անձնատուր, ***կամկար*** –դժվարությամբ համոզվող, ***սնար***– մահճակալի գլխատեղը
3) ***ամպհովանի*** –որևէ բանի վրա ամրացված հովանոց, ***ապաշխարանք*** –մեղքը քավելու համար սահմանված պատիժը, ***սնդուս***–փայլուն երեսով գործվածք
4) ***լեգեոն***–զորական խոշոր միավորում Հին Հռոմում, ***գաղափարագիր*** –վանկային այբուբենի նշան, ***ամբրոս*** –աստվածների կերակուր

8 **Ո՞ր պնդումն է ճիշտ:** *(1 միավոր)*

1) ***-յալ*** ածանցով կարող են կազմվել և՛ գոյականներ, և՛ ածականներ:
2) ***-որդ*** ածանցով կազմվում են միայն գոյականներ:
3) ***-ական*** ածանցով կազմվում են միայն ածականներ և գոյականներ:
4) ***-ք*** ածանցը միանում է միայն անկախ գործածություն չունեցող արմատներին:

9 **Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-ներ* վերջավորությամբ:** *(1 միավոր)*

1) սերմնացան, աշխատավարձ, հերթապահ, հրձիգ
2) ակնաբույժ, անասնակեր, հողաչափ, հանքափոր
3) շտաբ, մաքսանենգ, տեսակետ, տոնացույց
4) երկնաքեր, վիպագիր, պատճեն, ստուգայց

10 **Ո՞ր պնդումն է ճիշտ:** *(1 միավոր)*

1) Միևնույն բայը չի կարող է միաժամանակ ունենալ երկու տիպի բայածանց:
2) Դերանվանական հոլովման ենթարկվող ոչ բոլոր դերանուններն ունեն ներգոյական հոլով:
3) Բոլոր բառերի դեպքում ***ս*** կամ ***դ*** հոդի՝ ստացական կամ դիմորոշ լինելը որոշվում միայն տվյալ նախադասության մեջ:
4) Բայի բաղադրյալ դիմավոր ժամանակաձևեր ունի միայն սահմանական եղանակը:

11 **Ո՞ր տարբերակում է նախադասության անդամներից 2-ի շարահյուսական վերլուծությունն էլ սխալ տրված:** *(1 միավոր)*

Հայտնի չէր, թե ինչից Արամի տրամադրությունը միանգամից ընկավ, երբ ներս մտավ հարևանը՝ Սաթենիկը, որի հայտնվելը խիստ անսպասելի էր մեզ համար, քանի որ կարծում էինք, թե նա քաղաքում չէ, հավանաբար երբևէ չի էլ գա:

1) ***հավանաբար*** – նախադասության անդամ չէ, ***մեզ համար*** – նպատակի պարագա
2) ***Սաթենիկը*** – ենթակա, ***որի***– հատկացուցիչ
3) ***էլ*** – ժամանակի պարագա, ***խիստ*** – չափի պարագա
4) ***ինչից***– անջատման անուղղակի խնդիր, ***երբ***– ժամանակի պարագա

12 **Ո՞ր նախադասության մեջ պետք է դնել միայն հետևյալ 2 կետադրական նշանները՝ մեկ բութ և մեկ միջակետ:** *(1 միավոր)*

1) Առաջ հողը պտուղ էր տալիս հիմա հողը խռովել է հին խոսք է հողը կռիվ չի սիրում:
2) Սպասումների մի ամբողջ ամիս ու հանկարծ այգուց դառնալիս թվաց շնչահեղձ է լինում նույն մայթով ընդառաջ էր գալիս նա:
3) Իմ խցում մեկուսացած համընդհանուր խելագարության առաջին նշաններն էի զգում անցել էր արդեն մենության ու մելամաղձության մեկ ամբողջ ամիս:
4) Քանի անգամ անցավ փողոցի այդ հատվածը պատանին չկար դա փաստ էր:

13 **Ո՞ր նախադասության մեջ դրվելիք բութերի քանակն է 3-ից պակաս:** *(1 միավոր)*

1) Դիմացը թղթեր թղթերին միայն նրա հանրությանը քաջ հայտնի անունը անկանոն ձեռագրով գրեթե անընթեռնելի գրված:
2) Ոչինչ չկա սարսափելի ոչ ծանր կսկիծ և ոչ անսահման ուրախություն շատ կածաններ կան բայց մի լայն ճանապարհ կա բոլոր կածաններն էլ վերջիվերջո գալիս են միախառնվում այդ ճանապարհին ինչպես Այրումի առուն Մարցա ջրին Մարցա ջուրն էլ ինչ-որ մեծ գետի:
3) Ինչ էլ որ պատմեր մի առասպել շահի օրերից թե հին հեքիաթ նա վերջացնում էր առակով ինչպես քահանան էր ասում իմաստության քաղմունք անելով:
4) Ահա իր սենյակը կամավոր բանտախուցը որտեղ նստում էր ժամերով չիմանալով ողջ է թե մեռած:

14 **Ո՞ր տարբերակում է ստորադաս նախադասության բնույթը սխալ նշված:** *(1 միավոր)*

1) Գյուղը, որտեղ ծնվել են իմ նախապապերը, գտնվում է Վասպուրականի Նորդուզ գավառում՝ հեռու-հեռու ձյունապատ լեռների մեջ: *(որոշիչ)*
2) Տա՛ր այս նամակը և հանձնի՛ր, ում որ պետք է: *(հանգման խնդիր)*
3) Առավոտյան, երբ արևի շողքը հնձանի դռնակի ճեղքով փայլեց ներսում, Դիլան դային զարթնեց, տրորեց աչքերը: *(բացահայտիչ)*
4) Տարիներ անց որդին դարձավ այն, ինչ երազել էր մայրը ողջ կյանքում: *(ուղիղ խնդիր)*

15 **Նշել այն բառերի համարները, որոնցում հնչյունափոխություն *չկա:*** *(1 միավոր)*

1. տվյալ, 2. քենակալ, 3. անստույգ, 4. խրամատ, 5. առաքելություն, 6. սանրվածք, 7. կպչուն, 8. հրվանդան, 9. հյուսնություն

16 **Նշել այն բառերի համարները, որոնցում 2-ական հնչյունափոխություն կա:** *(1 միավոր)*

1. կանխագուշակել, 2. ուսուցչություն, 3. հուզախռով, 4. դստրիկ, 5. հանդգնել, 6. մրցութային, 7. ակնաբուժարան, 8. նրբաքնքուշ, 9. քաղցրահնչյուն

17 **Նշել այն բառազույգերի համարները, որոնց բառերը հոմանիշներ *չեն:*** *(1 միավոր)*

1. վիհ–խորխորատ, 2. հակամետ–հակոտնյա, 3. ցել–անդաստան, 4. անտունի–տնանկ, 5. ստեպ-ստեպ–հաճախ, 6. պարականոն–անկանոն, 7. հանգույն–նման, 8. առաքուր–ոտնակոխ, 9. գոց–բերանացի

18 **Նշել այն բառերի համարները, որոնք համանուններ *չունեն:*** *(1 միավոր)*

1. մատյան, 2. դատել, 3. գիր, 4. ափ, 5. հարկ, 6. կույս, 7. ծանր, 8. հղի, 9. պապ

19 **Նշել այն բառերի համարները, որոնք կազմությամբ բարդածանցավոր *չեն:*** *(1 միավոր)*

1. հնամենի, 2. տարուբերում, 3. տրամադրություն, 4. դիպակազարդ, 5. թվաքանակ, 6. գերանածածկ, 7. ստնտու, 8. ակնածանք, 9. կակղամորթ

20 **Նշել այն բառերի համարները, որոնք ունեն միայն մեկ ածանց:** *(1 միավոր)*

1. տարկետում, 2. բազմաբնույթ, 3. մարդկային, 4. բամբակեղեն, 5. թռչնամիս, 6. ճակատագրական, 7. առանցք, 8. վերելակ, 9. հեռուստակայան

21 **Նշել այն բառերի համարները, որոնց արմատին (արմատներից մեկին) կարող է միանալ *-ք* ածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի:** *(1 միավոր)*

1. դառնաղի, 2. այլադավան, 3. բոթաբեր, 4. անաչառ, 5. կրավորական, 6. կաթնասուն, 7. դրանիկ, 8. ծովահեն

22 **Նշել այն բառերի համարները, որոնց արմատին (արմատներից մեկին) կարող է միանալ *-ակ* ածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի:** *(1 միավոր)*

1. խաժագույն, 2. մահագույժ, 3. սուզանավ, 4. ունելի, 5. սոխուկ, 6. դարակես, 7. հոգեպարար

23 **Նշել այն բառերի համարները, որոնց արմատին (արմատներից մեկին) կարող է միանալ *-ոն* ածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի:** *(1 միավոր)*

1. ոսկեծամ, 2. միլիարդ, 3. սուտմեռուկ, 4. նյութապաշտ, 5. զգայացունց, 6. լիալուսին, 7. հարցաթերթիկ, 8. կերակուր, 9. շնչակտուր

24 **Նշել այն բառերի համարները, որոնց արմատներից մեկին *(միևնույն արմատին)* կարող են միանալ և՛ *-անք*, և՛ *-ուն* ածանցները և կազմել 2 նոր բառեր:** *(1 միավոր)*

1. ծփծփալ, 2. հանցակցություն, 3. սողանցք, 4. սահադաշտ, 5. դռնփակ, 6. խոսափող, 7. բեղմնավոր, 8. արյունահոսություն

25 **Նշել այն բառերի համարները, որոնք ունեն միայն մեկ խոսքիմասային արժեք:** *(1 միավոր)*

1. նման, 2. հանձինս, 3. սակայն, 4. մինչև, 5. մինչդեռ, 6. երբևիցե, 7. անկախ, 8. համապատասխան, 9. այլ

26 **Յուրաքանչյուր շարքի համար նշել այն բառերի (բառակապակցությունների) համարները, որոնք սխալով են գրված:** *(2 միավոր)*

1. 1. Սեյշելյան կղզիների հանրապետություն, 2. Երուսաղեմի հայոց պատրիարքական աթոռ, 3. տեր Վարդան, 4. Յուսուֆ Իբն Այուբ, 5. ՄԱԿի անվտանգության խորհուրդ, 6. Մերձբալթյան Երկրներ, 7. Էլզաս-Լոթարինգիա, 8. Մշո առաքելոց վանք, 9. Հարավ Չինական ծով

2. 1. միջին հայերենյան, 2. իմի բերել, 3. սայաթ-նովյան, 4. լիտր-վայրկյան, 5. ինչ որ է, 6. առ ոչինչ, 7. ռոմանա-գերմանական, 8. Տուշպա-Վան, 9. բառ-մասնիկ

27 **Նշել համապատասխան նախադասությունների համարները:** *(9 միավոր)*

1. Նա գիտեր՝ ինչ աստղ երբ է դուրս գալիս: 2. Եթե սարերը առավոտյան պատվում էին մառախուղով, ապա ցերեկը ինչ եղանակ պիտի լինի: 3. Երաշտի ժամանակ, երբ հանկարծ պարզկա երկնքում որոտում է կայծակը, ինչու պիտի դեղնաջուր թափվի և ոչ մաքուր անձրև: 4. Մարցա ջրի բնույթը նա ուսումնասիրել էր շատ մանրամասն: 5. Ձմեռվա կեսին, երբ սար ու ձոր դեռ ձյունածածկ էին, իսկ գետակը սառույցի տակ դժգոհ մռռում էր, ջրաղացպանը զրույցի մեջ հայտնում էր, որ գարունն սկսվելիս Մարցա ջուրը շատ չարություններ է գործելու: 6. Հենց այդպես էլ պատահում էր. գարնանային գետը հորդանում էր և ափերից ելնելով՝ ավերում էր մարագները: 7. Քանդում էր գետափի բոստանների պատը և հաստաբուն ծառերը բերանին՝ փախչում: 8. Կամ ծառս տալով իր պղտոր գրկի մեջ էր առնում սպիտակ գառնուկին: 9. Միամիտ գառնուկը խաղալով ու թռչկոտելով մոտենում էր, ապուշ-ապուշ և զարմացած նայում գետից վեր թռչող ալիքներին, որոնց ցայտումը մի վայրկյան դիպչում էր դնչին, ու մեկ էլ ոտքերը կտրվում էին գետնից:

1. կրավորական սեռի բայ ունեցող նախադասություն(ներ)
2. անկանոն բայ *չունեցող* նախադասություն(ներ)
3. պակասավոր բայ ունեցող նախադասություն(ներ)
4. սոսկածանցավոր բայ *չունեցող* նախադասություն(ներ)
5. բազմապատկական բայ ունեցող նախադասություն(ներ)
6. *ան* հոլովման ենթարկվող գոյական ունեցող նախադասություն(ներ)
7. անկախ դերբայ *չունեցող* նախադասություն(ներ)
8. ներգործական սեռի բայ *չունեցող* նախադասություն(ներ)
9. մակբայ ունեցող նախադասություն(ներ)

28 **Տրված հատվածներից 3-ում դարձվածք կա: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. Վերքիս ցավից լաց եմ լինում՝
   Դու ինձանից նեղանում ես,
   Նեղանալը՝ քարը գլխին,
   Սկսում ես նեղացնել:
2. Երազեցի շարունակ
   Իմ կյանքի մեջ ես մանկուց
   Ու մնացի միշտ մենակ
   Պատրանքի մեջ ես մանկուց:
3. Խորքերում գանձ ունեն քարափները,
   Թիկունքներին ունեն անտառ ու հերկ...
   Միայն մի բան չունեն քարափները,
   Քարափները չունեն կարապի երգ:
4. Ձեզ ժամանակն է դարբնել,
   Դուք մնացե՛ք, քարափնե՛ր,
   Ես գնացող եմ…
5. Թե ինձ էլ լքել եմ մեկ-մեկ,
   Չեմ լքել պատկերդ,
   Երեսով չեմ տվել երբեք
   Ուշացած պարտքերդ:
6. Իմ տարեկից աշխարհից
   Լոկ սարերս են մնացել
   Ու քարափներս:
   Քանի մահի եմ վկա,
   Ո՞ւր է կորել ու չկա
   Ծույլ Գաբրիելս:
7. Քարանձավներն են քրտնել
   Ամայության սարսուռից,
   Բայց նրանց քիվ ու քունքից
   Արևի հոտ է գալիս:
8. Եղել է, որ ցուրտ է եղել,
   Ես շոգից շիկնել եմ դրսում,
   Բայց հիմա սենյակում այս շոգ
   Չգիտեմ՝ ինչու եմ մրսում:
9. Ես վաղուց մեռած
   Հառաչանքներիս
   Մատուռն եմ մամռած,
   Եվ իմ կնճռոտված
   Գրերն աշխարհում
   Վերծանող չկա:

29 **Նախադասություններից 3-ի գծապատկերներում սխալ *չկա:* Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. Թե երբ էր կատարվել դեպքը, իմացվեց միայն երկու տարի հետո, երբ հեռավոր Սիբիրում բռնվեց հանցագործը, որովհետև որպեսզի պարզվեր հանցագործությունը, անհրաժեշտ էր բռնել հանցագործին, որն այնպես էր թաքնվել, որ դժվարանում էին գտնել:



2. Վերջապես կիսաբոհեմական խավի ներկայացուցիչների՝ Արտաշեսի, որ բանաստեղծություններ էր գրում, Ֆելիքսի, որ ճարտարապետ էր, ընկերակցությամբ նշեցին Վարդգեսի վերադարձը սրճարան, որ կոչվում էր «Միջանցահովիկ», որտեղ Վալյան լավ սուրճ էր պատրաստում, և շամպայնը թանկ չէր:



3. Խոտհունձը անհրաժեշտ է կարճ ժամկետում կատարել, որովհետև երբ սկսվում են չորային ամիսները, և անձրև չի գալիս, ամռան այրող արևը չորացնում է խոտը, և գերանդիով չի հնձվում դեղնած խոտը:



4. Ցերեկը, երբ բարկ արևի լույսը պայծառ է, երևում են ժամանակի տարաբնույթ հետքերը, իսկ գիշերը սֆինքսը ավելի հարթ է երևում, և ստվերների մեկընդմեջ փոփոխությունից թվում է, թե նա հուզվում է և զգում՝ հիմա կքայլի քուրմերի թափորը, և կսկսվի տրտում արարողությունը:



5. Երբ կաթողիկոսը առաջին անգամ եկել է Էջմիածին և հանդիպել ճեմարանի ողջ ուսուցչական կազմին, տեսնելով բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանին ու նրա կնոջը՝ Զարուհուն, որ բարետես արտաքին չուներ՝ ասել է՝ մի՞թե այդքան սիրային բանաստեղծությունները նրա համար են գրվել:



6. Հենց քիչ առաջ նա դուրս էր եկել համագումարի դահլիճից, որտեղ հավաքվել էին գրողները, և որտեղ բանաստեղծության հարցերին վերաբերող զեկուցման մեջ գրականագետը, որը մի անվանի գիտնական էր, ոչնչացրել էր նրա ժողովածուն, որ լույս էր տեսել օրերս:



7. Այս վիճակը կբարդանար, եթե փաստաթղթերը ընկնեին գրպանից, Սեղան գտներ, Թորոսն էլ հայտնաբերեր Սեղայի գրպանում, բորբոքվեր և կեսգիշերին հասներ այնտեղ՝ վրեժ լուծելու համար, բայց ընկներ զինված ավազակների ձեռքը:



30 **Նախադասություններից 3-ի ստորադաս բաղադրիչների բնույթները սխալ են տրված: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. Հենց քեզ էի ուզում տեսնել, որ բոլորից շատ ես քննադատել ծրագրերս: *(բացահայտիչ)*
2. Ովքեր աչքի են ընկնում հոգու ազնվությամբ, միշտ պատրաստ եմ ընկերակցելու նրանց: *(հանգման խնդիր)*
3. Ամեն ինչից հրաժարվելու իրական պատճառներից էր և այն, որ նա կորցրել էր հավատը սեփական անձի նկատմամբ: *(ենթակա)*
4. Թուլությունը նրանից էր, որ շատ արյուն էր կորցրել: *(ստորոգելի)*
5. Այցելած ժամանակ էլ, հակառակ իրեն շատ ազատ պահելուն, ջանում էր՝ հարգանքի սահմանները չանցնի: *(զիջման պարագա)*
6. Նման պատանիները դառնում են այն, ինչ նախատեսում են քաղքենի ծնողները և ոչ թե իրենք՝ պատանիները: *(ուղիղ խնդիր)*
7. Դու, որ հրաշալի հիշողություն ունես, մի՞թե մոռացել ես ամենակարևորը: *(ենթակա)*

31 **Նախադասություններից 3-ում կետադրական սխալ *չկա:* Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. Գյուղը չէր հասկանում և տղամարդ չլինելու դժբախտությունը չունենալով՝ նույնացնում էին մարդն ու տղամարդը, մինչդեռ սերը նա՛խ մարդկային է, հետո՝ տղամարդկային:
2. Ես, կանգնած տաճարի կենտրոնում, նայում եմ վեր. հպարտ եմ, որ այնտեղ՝ ամենավերևում՝ երկնքին մոտիկ՝ այն հրաշք գմբեթն է, որ վերակառուցել է Տրդատ ճարտարապետը:
3. Քնած, թե արթուն, ծերունին լսում էր երգը հեռավոր օվկիանի, ու հոգին, աշխարհից անէացած, տանում էր նրան հեռու մի աշխարհ, ուր ո՛չ վիշտ կար, ո՛չ էլ տառապանք:
4. Դղյակի եկեղեցու ժամհարը զարկեց կոչնակը՝ մարդկանց հրավիրելով աղոթքի և աճապարանքով իջավ գավիթ՝ հանդիպելու ուխտավորներին:
5. Աշնան պայծառ առավոտ էր, Արարատյան դաշտի հրաշագեղ մի առավոտ, երբ երիտասարդների խումբը, զինված մահակներով ու հրացաններով, դուրս եկավ ամրոցից:
6. Քամին Արագածի արևի՝ ոսկեզօծումից զարթնող բնության թովչական գրկում աստղերի արցունքից գոյացած վճիտ լճակի հովը կբերի:
7. Երկաթակուռ դարպասից ներս մտնող տղամարդկանցից առաջինը պարթևահասակ էր, սև բեղ-մորուքով:
8. Տասներեքերորդ դարում՝ օրըստօրե փթթող Անի քաղաքում, հարուստ ու ինքնագոհ մի իշխան էր ապրում՝ Անանիա անունով:
9. Որոշվեց այսպես. Մկրտիչը պետք է իր կառուցած աղբյուրի բացման հաջորդ օրվա լուսաբացին թաքնվի աղբյուրի մոտ՝ տեսնելու՝ աղջիկներից ով է առաջինը ջուր վերցնելու. ով լինի առաջինը, նա էլ կդառնա ուստայի կինը:

32

Նախադասություններից 3-ի ստորադաս բաղադրիչները ճիշտ են փոխակերպված: Նշել դրանց համարները: *(3 միավոր)*

1. *Արքայադուստրն այնքան գեղեցիկ էր ու հմայագեղ, որ խելքահան էր անում իրեն հանդիպող շատ երիտասարդ պալատականների:*
   Արքայադուստրն իրեն հանդիպող շատ երիտասարդ պալատականների խելքահան լինելու աստիճան գեղեցիկ էր ու հմայագեղ:

2. *Հենց երեկոյան կարող եք գալ մեր տուն, և եթե մայրս տանը լինի, երկուսս էլ կշահենք:*
   Հենց երեկոյան կարող եք գալ մեր տուն, և մորս՝ տանը լինելու դեպքում երկուսս էլ կշահենք:

3. *Ծանր լուրեր ստացանք այն մասին, որ արցախյան պատերազմի ընթացքում գերի են ընկել որոշ զինվորներ:*
   Ծանր լուրեր ստացանք արցախյան պատերազմի ընթացքում գերի ընկած որոշ զինվորների մասին:

4. *Էքսկուրսիան վարելու էր Արամը՝ բացառիկ ունակություններով օժտված այդ երիտասարդը, որը հրաշալի տիրապետում էր արևելյան լեզուների:*
   Էքսկուրսիան վարելու էր արևելյան լեզուների հրաշալի տիրապետող Արամը՝ բացառիկ ունակություններով օժտված այդ երիտասարդը:

5. *Այդ ժամանակ Արծրունին դեռ չէր զրկվել իր ահագին կալվածքից, որը Թիֆլիսի խոշորագույն շինությունն էր:*
   Այդ ժամանակ Արծրունին դեռ չէր զրկվել Թիֆլիսի խոշորագույն շինությունից՝ իր ահագին կալվածքից:

6. *Պետությունը օգնություն է ցուցաբերում նրանց ընտանիքներին, ովքեր իրենց մատաղ կյանքը զոհաբերեցին հանուն հայրենյաց կամ դարձան հաշմանդամ:*
   Պետությունը օգնություն է ցուցաբերում իրենց մատաղ կյանքը հանուն հայրենյաց զոհաբերածների կամ հաշմանդամ դարձածների ընտանիքներին:

7. *Այդ անակնկալ դժբախտությունից հետո, հասկանալի է, այն բոլոր գաղափարները, որ արքեպիսկոպոսը քարոզել էր իր մտերիմներին, միանգամից անիմաստ դարձան:*
   Այդ անակնկալ դժբախտությունից հետո հասկանալի է արքեպիսկոպոսի՝ իր մտերիմներին քարոզած բոլոր գաղափարների միանգամից անիմաստ դառնալը:

8. *Ես շատ լավ հասկանում էի՝ ինչպես պիտի ինձ պահեմ այդ բարձրաստիճան հյուրերի ներկայությամբ:*
   Ես շատ լավ հասկանում էի այդ բարձրաստիճան հյուրերի ներկայությամբ ինձ ինչպես պահելս:

33 **Ուղղակի խոսքն անուղղակիի փոխակերպման տարբերակներից 3-ում սխալ կա: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. *- Քեզ ձի կնստեցնեմ, ես ու դու ձիով կգնանք կայարան, հայրիկին կայարանից կբերենք,- ասաց մեծ եղբայրը:*
   Մեծ եղբայրը ասաց, որ նրան ձի կնստեցնի, իրենք ձիով կգնան կայարան, հայրիկին կայարանից կբերեն:

2. *- Ի՞նչ իրավունքով եք Դուք աշխատանքային խմբից հեռացրել Ահարոնյանին,- ասել էր Հակոբը ղեկավարին, ապա հավելել.- չէ՞ որ այդ հեռացվածին՝ իբրև իրավաբանի, փոխարինել չեք կարողանա:*
   Հակոբը ղեկավարին ասել էր, ապա հավելել, թե ինչ իրավունքով է նա աշխատանքային խմբից հեռացրել Ահարոնյանին. չէ՞ որ այդ հեռացվածին՝ իբրև իրավաբանի, փոխարինել չի կարողանա:

3. *Շահը դիմացինին այլայլված ասաց.*
   - Չնայած դու իրավացի ես, բայց նրանց սուտն այդ պահին ավելի թանկ էր, քան քո ճշմարտությունը. նրանց ստից ես հոգով խաղաղվեցի, իսկ քո ճշմարտությունից ես իմ ողջ էությամբ խոցվեցի:
   Շահն այլայլված ասաց դիմացինին, որ չնայած նա իրավացի է, բայց նրանց սուտն այդ պահին ավելի թանկ էր, քան նրա ճշմարտությունը. նրանց ստից ինքը խաղաղվեց հոգով, իսկ նրա ճշմարտությունից ինքն իր ողջ էությամբ խոցվեց:

4. *Անիում մի օտարական, փռի տիրոջը մոտենալով, զարմանք է հայտնում.*
   - Արդեն քանի օր է՝ ինձ մի հարց է տանջում, թե փուռդ ինչու է ողջ գիշեր բաց, և մի՞թե անեցիներն այնքան շատակեր են, որ գիշերներն էլ են իրենց համար հաց գնում:
   Անիում, փռի տիրոջը մոտենալով, մի օտարական զարմանք է հայտնում, թե արդեն քանի օր է՝ նրան մի հարց է տանջում. թե փուռն ինչու է ողջ գիշեր բաց, և մի՞թե անեցիներն այնքան շատակեր են, որ գիշերներն էլ են իրենց համար հաց գնում:

5. *- Դու լա՛վ իմացիր, որ հացի պակասից մարդու մարմինն է մեռնում, գրքի պակասից՝ քեզ նման անգետի հոգին, և այդպիսի սովն առավել կործանարար է, քան հացինը,- հակադարձեց իմաստասերը վաճառականին:*
   Իմաստասերը վաճառականին հակադարձեց, որ նա լավ իմանա՝ հացի պակասից մարդու մարմինն է մեռնում, գրքի պակասից՝ նրա նման անգետի հոգին, և այդպիսի սովն առավել կործանարար է, քան հացինը:

34 **Տրված պնդումներից 3-ը սխալ են: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. ***Ը*** ձայնավորը հնչյունափոխվում է միայն այն դեպքում, երբ բառավերջի՝ նրանով կազմված փակ վանկին հաջորդում է ձայնավորով սկսվող բաղադրիչ:
2. Կա նախածանց, որը ենթարկվում է հնչյունափոխության:
3. Կրկնավոր բարդությունների արմատներից մեկում կարող են փոխված լինել ոչ միայն ձայնավորները, այլև բաղաձայնները:
4. Ի տարբերություն ***յու*** երկհնչյունի՝ ***ույ*** երկհնչյունը չի կարող դառնալ գաղտնավանկի ***ը:***
5. Նշվածները հայերենի խուլ կամ շնչեղ խուլ բաղաձայններ են՝ ***պ, կ, տ, ծ, չ, փ, ք, ղ, հ:***
6. Մի շարք բառեր հոլովվելիս կամ հոգնակի կազմելիս արևելահայերենում ենթարկվում են հնչյունափոխության, արևմտահայերենում՝ ոչ:
7. Գաղտնավանկը կարող է լինել ինչպես փակ, այնպես էլ բաց վանկ:
8. Բառավերջի ***ի*** ձայնավորը ***-ակ*** և ***-ական*** ածանցներից առաջ կարող է դառնալ ***յ:***
9. Հոգնակի կազմելիս բաղադրյալ բառերի միավանկ վերջնաբաղադրիչի փակ վանկի ***ի***-ն ոչ միշտ է հնչյունափոխվում:

35 **Տրված պնդումներից 3-ը ճիշտ են: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. Բոլոր բառերը, բացի իրենց հիմնական իմաստից, կարող են ունենալ նաև փոխաբերական իմաստ:
2. Հոմանշային շարքի բոլոր բառերը միշտ կարող են փոխարինել իրար:
3. Խառը հապավումները կարող են լինել և՛ հոդակապով, և՛ անհոդակապ:
4. Բառասկզբի ***դժ*** տառակապակցությունը ոչ միշտ է նախածանց:
5. Բարդ բառերում բացի արմատներից և հոդակապից կարող են լինել նաև բառակազմական այլ մասնիկներ:
6. Բառը չի կարող սկսվել մեկից ավելի նախածանցներով:
7. Վերջածանցը ոչ միշտ է բառի վերջին բաղադրիչ:
8. Նոր բառ կարող են կազմել ինչպես ածանցները, այնպես էլ վերջավորությունները:
9. Հոմանշային շարքեր ունենում են բոլոր խոսքի մասերը, բացի դերանուններից, կապերից և շաղկապներից:

36 **Տրված պնդումներից 3-ը ճիշտ են: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. Հարաբերական ածականները միշտ բաղադրյալ բառեր են:
2. ***Ես, դու, նա, ինքը*** անձնական դերանունները եզակի և հոգնակի թվերում հոլովվում են դերանվանական հոլովմամբ:
3. Դերանվանական հոլովման ենթարկվում են միայն անձնական դերանունները և ցուցական դերանունների մի մասը:
4. Բոլոր կանոնավոր բայերը եզակի հրամայականում ստանում են կա՛մ ***իր,*** կա՛մ ***ա*** վերջավորություն:
5. Բոլոր գոյականների՝ ***-եր*** և ***-ներ*** վերջավորություններով կազմված հոգնակիների սեռականը հոլովը արևելահայերենում կազմվում է ***ի***, արևմտահայերենում՝ ***ու*** հոլովիչով:
6. Կրավորական, պատճառական, ***ն, չ*** սոսկական ածանց ունեցող բոլոր կանոնավոր բայերը ***ե*** խոնարհման են:
7. Սոսկածանցավոր բոլոր բայերի անցյալ կատարյալը կազմվում է ***-ա, -ար, -ավ, -անք, -աք, -ան*** վերջավորություններով:
8. Բոլոր գոյականները եզակի և հոգնակի թվերում կարող են ստանալ ***ը*** կամ ***ն*** որոշիչ հոդ:
9. ***Թե*** շաղկապը կարող է լինել և՛ համադասական, և՛ ստորադասական, մինչդեռ ***թե չէ***-ն միայն ստորադասական է:

37 **Տրված պնդումներից 3-ը սխալ են: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. Ներգործող, միջոցի, հանգման, վերաբերության անուղղակի խնդիրները կարող են արտահայտվել կապային կառույցներով:
2. Ենթակա ստորադաս ունեցող գերադաս նախադասության ստորոգյալը կարող է լինել թե՛ պարզ, թե՛ բաղադրյալ:
3. Պարզ նախադասության՝ ներգործական սեռի բայով արտահայտված ստորոգյալը չի կարող ունենալ հանգման անուղղակի խնդիր լրացում:
4. Համակատար դերբայը նախադասության մեջ կարող է հանդես գալ ինչպես ժամանակի պարագայի, այնպես էլ բացահայտչի շարահյուսական պաշտոններով:
5. Անվանական անդեմ նախադասությունը կարող է լինել և՛ պարզ, և՛ բարդ:
6. Միակազմ անենթակա նախադասության ստորոգյալը չի կարող դրվել երկրորդ դեմքով:
7. Ստորադաս նախադասությունը միշտ կատարում է նույն պաշտոնը, ինչ գերադասում՝ հարաբերյալը:
8. Բարդ ստորադասական նախադասության բաղադրիչները կարող են անջատվել և՛ ստորակետով, և՛ բութով, և՛ միջակետով:
9. Պարզ ստորոգյալը կարող է արտահայտվել ***լինել*** բայով:

38 **Նշել տրված նախադասության մեջ հանդիպող շարահյուսական միավորների քանակները:** *(9 միավոր)*

Նա, ինչ հեռացել էր հորից ու մորից, արդեն ծնողներին նամակ էր գրում Աննայի միսենյականոց բնակարանում, որտեղ ապաստանել էր ինքը, և որը նրան շատ ընդարձակ էր թվում, քանի որ իր վարձած նախկին «բնակարանը» մի հավաբուն էր, ուր միշտ դժկամորեն էր մտնում:

1. ձևի պարագա
2. անջատման անուղղակի խնդիր
3. ժամանակի պարագա
4. ուղիղ խնդիր
5. հանգման անուղղակի խնդիր
6. տեղի պարագա
7. բաղադրյալ ստորոգյալ
8. որոշիչ
9. հատկացուցիչ

39 **Կարդալ նախադասությունը և պատասխանել տրված հարցերին:** *(5 միավոր)*

Խեցիներն ինձ նախևառաջ դուր են գալիս այն պատճառով, որովհետև գիտեմ՝ յուրաքանչյուրի մեջ մի փոքրիկ կյանք կա, ու հոգուս խորքում զգում եմ, որ անարդար է նրանց պոկելը այն վայրից, որտեղ իրենք ապրում են, բայց հայրս ասում էր, որ դա այնպիսի անարդարություն չէ, որի համար արժի տխրել կամ պետք է լաց լինել:

1. Քանի՞ կապ կա:
2. Քանի՞ շաղկապ կա:
3. Բայի քանի՞ եղանակով դրված ստորոգյալներ կան:
4. Քանի՞ տեսակի դերանուն կա:
5. ***Ու*** հոլովման ենթարկվող քանի՞ բառ կա: